

**Տ. ԱՐՏԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԻԳՐԱՆՅԱՆԻ ՔԱՐՈՋԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
ՆԱՐՈՒԹՅԱՆ ՃՐԱԳԱԼՈՒՅՅԻՆ**

(10 ապրիլի 2004 թ.)

*«Եւ տեսա շարժումն մեծ եղև, զի հրեշտակ
Տեսուն իջեալ յերկնից՝ մարտցեալ ի բաց
թաալեցոյց զվեմն ի դրաց անրի, և
կարէր ի վերայ կորսա»:*

*«Եվ տեսա մեծ երկրաշարժ եղավ, որովհետև
Տիրոջ հրեշտակը երկնքից իջնելով՝ մարտցալ,
դռնից վեմը մի կողմ գլորեց ու անրեց կրա վրա»:*
(Մատթ. ԻԸ 2)

«Յանուն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամեն»:

Մարթնոս Ավետարանիչն այս սեղմ փողերով է արձանագրում նկարագրական կողմն այն եղելության, որը գալու էր հեղաշրջելու համայն մարդկությունը ոչ միայն սոսկ պարմական առումով, այլ նաև բարոյական, հոգեբանական, մշակութային և մարդկային կյանքը բնորոշող ոլորտներով ու բնագավառներով: Սուրբ Առաքյալն այս երկու փոքրիկ փողերով է բավարարվում, քանզի ավետարանիչների համար Քրիստոսի Հրաշափառ Հարության դեպքը սոսկ ժամանակի մեջ կատարված պարմական իրողություն չէր, որը պետք էր նկարագրել և բնութագրել որպես այդպիսին:

Տառապանքի սև ու փխուր օրերին, հուսահատ ու դժնդակ իրողություններից վիհաված Հորը հարցնում էր իր բարեկամներին. *«Եթե մարդ մեռնի, մահվանից հետո նույնպե՞ս պիտի ապրի»* (Հմմտ. Հոր ԺԴ 14): Ամեն անհատ, որ ապրում է այս աշխարհում, միևնույն հարցն ունի իր շուրթերին՝ արդյոք գերեզմանը կյանքի վերջին հանգրվա՞նն է, թե՞ կյանքը շարունակվում է նաև գերեզմանից անդին: Այս մեծ հարցի պատասխանը լավագույն կերպով փվեց մարդկությանը հենց Ինքը՝ Հիսուս Քրիստոս՝ Իր Հրաշալի Սուրբ Հարությամբ:

Քրիստոսի Հարությունը Կեղի ունեցավ խորհրդավոր և անիմանալի կերպով՝ Աստվածային ուժի և Աստվածային զորության ներգործությամբ: Այդ սեղմ փողերի երևում թաքնված խորհուրդն այն է, որ Աստված, Ով սրելոճագործում էր ի սկզբանե և ոչնչից արարում էր ամեն ինչ, Ով բազում անգամներ այցելության եկավ ժողովրդին դեռևս Քրիստոսից առաջ, ցնցեց լեռները, ճեղքեց ծովը և փրկություն բերեց ընտրյալ ժողովրդին, այդ նույն Աստված այս անգամ ևս ցուցադրում է Իր զորությունը՝ շարժելով երկրի հիմքերը և Հիսուս Քրիստոսի միջոցով այնպեղից դուրս կորզում մահվան դատապարտվածներին՝ վերստին կյանք ու անմահություն շնորհելով: Հարությունը Ավետարանիչների համար չի մնում լոկ պարմական մի դրսևորում: Նրանց ուշադրությունը բևեռված է նաև Հարությանը նախոր-

դող և հաջորդող դեպքերին, քանզի միայն նրանցով է պայմանավորված ու իմաստավորված Քրիստոսի Հրաշափառ Հարության ներքին խոր իմաստը ու բովանդակությունը:

Ովքեր այս վերջին շաբաթվա ընթացքում մեզ հետ միասին ապրեցին Քրիստոսի երկրային կյանքի վերջին օրերը, նրանք կարողացան հասկանալ ու ըմբռնել, թե ինչպես Քրիստոս ընդրեց խաչի ճանապարհը՝ մարդկային մեղքը զամելով այնտեղ և, Գողգոթայի վրա Իր արյունը թափելով, սրբեց ինչպես Իր ժամանակի, այնպես էլ գալիք մարդկության մեղքերը, ովքեր հավատացին և գնացին Իր ճանապարհով:

Հավատացեք, որ Քրիստոսի խաչելության խորհուրդը կմնար սոսկ մի առեղծված՝ մարդուն կսկիծ և սուգ պարճառող, եթե չլիներ Քրիստոսի Հրաշափառ Հարությունը: Երբ Քրիստոսին ձերբակալեցին, այն աշակերտները, ովքեր երեք փարի շարունակ ապրում էին Տիրոջ հետ և ունկնդրում Նրան, թողեցին ու ցրվեցին: Մինչև իսկ Պետրոս Առաքյալն ուրացավ Նրան, թեև հպարտանում էր, որ ինքը ոչ մի ապրանքի առջև չի հրաժարվի Քրիստոսից: Առաքյալների համար անհասկանալի ու անըմբռնելի էր, թե ինչպես Փրկիչը, որ եկել էր աշխարհը փրկելու, կարող էր մարտնչել մարդկանց ձեռքը, խաչ բարձրանալ, մահվան դարպարարվել ու, հետո էլ, մահանալ:

Հուսահատության ու հուսալքության մեջ էին բոլոր աշակերտները, ինչպես նաև կանայք, ովքեր այնուհետև առաջին ավերարարները պետք է լինեին Քրիստոսի Հրաշափառ Հարության: Հարությունը Հրաշափառ գալիս է վերաիմաստավորելու այն բոլոր իրադարձություններն ու իրողությունները, որ կային մինչ այդ: Քրիստոս Իր Հարությամբ դարապարտում է խաչելությունը, և մահանում է մահը՝ Նրա Հարության սքանչելի ավերիսով:

Երբեք որևէ տրամաբանական կամ բանական միտք անկարող է բացատրել այն փաստը, թե ինչպես հուսահատված ու հուսալքված աշակերտները, որ ձկնորսներ էին, անուս ու անզեպ մարդիկ, հանկարծ վերափոխվեցին քրիստոնեության նախաձեռնող թարգմանիչների, ովքեր ավերիսը տարան համայն մարդկությանը աշխարհի չորս ծագերում և հալածվելով ու բռնությունների ենթարկվելով, մինչև իսկ նահապտակվելով, մշտապես կարողացան թարգմտել ամենուր, թե՛ «Քրիստոս յարեալ ի մեռելոց»:

Թեև հազար ինը հարյուր յոթանասուն մեկ փարիներ շարունակ բազմաթիվ մարդիկ փորձել են ջնդդունել Քրիստոսի Հարության իրականությունը, սակայն մշտապես այն առկա է, որովհետև իրապես եղել է այդ իրողությունը, որի վկաններն են Քրիստոսի թափուր գերեզմանը, Դամասկոսի ճանապարհին դարձի եկած Պողոս Առաքյալը, որ հայտարարում է, թե «Եթե Քրիստոս Հարություն չի առել, ընդունայն է ձեր հավատքը, ընդունայն է նաև մեր քարոզությունը» (Հմմտ. Ա Կորնթ. ԺԵ 14): Սակայն Քրիստոս Հարություն է առել որպես անդրանկիլ մեռելներից և բոլորիս է պարզենք հարությամբ ապրելու մեծ խորհուրդը. «Մահուամբ զմահ կոխենաց և յարութեամբն խորով մեզ զկեանս պարզենաց»:

Քրիստոսի Հարությունը եղել և մնում է այն լուսավոր հանգրվանը, որտեղ անսահմանափակը հանդիպում է սահմանափակին, և անժամանակը՝ ժամանակավորին: Դեռ ավելին՝ այդ շփումով, այդ մերձեցմամբ ժամանակավորը դառնում է անժամանակ, իսկ սահմանափակը՝ անպարագրելի, քանզի Քրիստոսի Հարությունից հետո Քրիստոս մարդը դադարում է ժամանակի մեջ լինելուց և քայլում է հավիտենության ու հավերժության մեջ: Ինչպես երկու հազար չորս փարի առաջ, Նրա ներկայությունը նույնքան իրական է նաև այսօր: Քրիստոս մարդը, որ սահմանափակ, մահկանացու մարմին էր ստացել, Հարությամբ խախ-

փում է այդ սահմանափակությունը և կարողանում է ցանկացած պահին փեղեղների ցանկացած անկյունում իր իրական ներկայությունն ապահովել: Սա այն իրողությունն է, որին հավաքում են աշխարհի համայն քրիստոնյաներն ինչպես երեկ, այնպես էլ այսօր, նաև հավաքալու են վաղը:

Սակայն ընդամենը Քրիստոսի Հարությունն ընդունելը, հավաքալը, հասկանալը, թե իրոք, հազար ինը հարյուր յոթանասուն մեկ տարի առաջ այդպիսի դեպք է պատահել, բավական չէ ճշմարիտ քրիստոնյա կոչվելու համար, բանգի Ավետարանի խոսքերով իսկ ասած, դեռևս նույնպես հավաքում են, բայց երանք այդ հավաքքով չեն փրկվում:

Ըստ այդմ, որևէ մեկն իրավունք չունի մտածել և զարմանալ, թե ինչպես Հուդան, որ առաքյալներից մեկն էր, ընդունակ եղավ մարտնչել իր Փրկչին, թե ինչպես այդ ամբողջը, որին երեք տարի քարոզել էր Քրիստոս, բռնկել էր, անդամալուծների ամոռնություն էր տվել, կույրերին՝ տեսողություն, համբերին՝ խոսելու ունակություն, կարողացավ ըմբոստանալ և բացականցել Պիղատոսի առջև, թե՛ «*Ի խաչ հասն գղա*»: Նույնքան նաև զարմանալի պեպք չէ համարել, որ առաքյալները թողնեցին ու փախան:

Այդ իրողություններն այսօր էլ յուրաքանչյուրիս համար իրական ու ներկա կարող են լինել, բանգի եթե մենք, առօրյա եկության խորքից ընկած, մեր ժամանակի մի փոքր մասը չենք եվիրաբերում՝ տեսնելու Քրիստոսի Հրաշափառ Հարության այս Ավետիսը, այլ շահադիտական կապարակներով մամոռն ենք դիզում, հեղուկաբար մենք նույնպես կամակից ենք լինում Հուդա Իսկարիոթի արագույն, որը երեսուն արծաթի համար մարտնչել իր Տիրոջը:

Եթե մենք շարունակում ենք մնալ որպես ամբարտապան ու գոռոզ արարածներ, չենք ցանկանում տեսնել այն լավն ու բարին, որ անթելված են մարդկային հոգում և, ի տես բարության, մեր մեջ չարություն ու նախանձ է ծնվում, մենք նույնպես կամակից ենք այն ամբոխին, որ գոռում էր. «*Ի խաչ հասն գղա*» (Մարկ. ԺԵ 13):

Եթե շարունակում ենք մեր մեջ պահել և չենք հրաժարվում մեր կրքերից և աղտոտի գործերից, որոնցով մարդն իրապես մնում է սոսկ մարդ, ուրեմն մենք դեռևս չենք լսել Քրիստոսի Հարության Ավետիսը, և մեր հոգիներում Քրիստոս դեռևս խաչված է:

Եթե մենք մեր սրտերի վրա դրել ենք ավելի ծանր մի վեճ, բան Քրիստոսի գերեզմանի վրա դրվածն էր, և որն ուրիշ բան չէ, եթե ոչ՝ «մեղք» կոչված այն իրողությունը, որն անտարադարձ է մեզ և ձեզ բոլորիդ, եթե դեռ չենք նկատում մեր սրտի վրայից այս վեճը, ուրեմն մեր հոգիներում Քրիստոս դեռևս թաղված է:

Սիրելիներ, Ճրագալույցի այս Սուրբ Պատարագի ժամանակ ուրիշ բան չենք անելու մենք, եթե ոչ գոնե այժմ, գոնե այս պահին մեր հոգիներից ներս զգալ վավերականությունը Քրիստոսի Հրաշափառ Հարության, դառնալ իրական աշակերտներ ու առաքյալներ, նաև նախանձախնդիր քարոզիչներ:

Մի կողմ գլորենք յուրաքանչյուրիս սրտին դրված մեղքի ծանր վեճը, որպեսզի իրոք մեր հոգիներից ներս Քրիստոս Հարություն առնի Հրաշափառ Ավետիսով: Որպեսզի այսպեղից հեռանալով, զնալով մեր օջախները՝ իրոք, ամենայն անկեղծությամբ և ամենայն համոզվածությամբ, այլ ոչ թե սոսկ ազգային կամ կրոնական օրենքին փորք տալով, մեկս մյուսին ողջունենք՝ ասելով. «*Քրիստոս յարեալ ի մեռելոց*», և ըստ արժանվույն ունկնդիրը լինենք «*Օրինալ է յարությանը Քրիստոսի*» օրինաբեր պատասխանին:

Ուրեմն, ականջալուր լինենք Աստվածային ձայնին, որ հրավիրում է մեռելությունից դեպի վերածնություն, դեպի հարուցյալ կյանքը. *ամեն*: